8420

ԱՐՄԻՐ ՌԱՆՉՊԱՐԻ» ԳՐԱԴԱՐԱՆ
մբագրությամբ Ե. ՍՈՒՐԵՆԻ

Պրոլետարներ բոլոր երկրների՝
միացե՛ք.

Գիրք II

# ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

## ԳԻՒՂՈՒՄ ՎԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏ. „ԳՐՈՒՑԵՆՏՐՈՊԵՉԱՏԻ" 1921 ԹԻՖԼԻՍ

Библиот. „Красного Батрака"
Под редакцией Е. СУРЕНА

Пролетарии всех стран — соединяйтес

Книга II

# РЕЗОЛЮЦИИ и ИНСТРУКЦИИ

## по работе в деревне

Изд. „Груцентропечати" 1921 Тифлис.

ЗКПЗ
П-86

16 JUL 2013

П-86

2 4 SEP 2006

0 8 DEC 2008

1006
29566

# ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒ-ԹԵԱՆ ԳԻՒՂՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I. Կազմակերպչական խնդիրը

*Իր երկամեայ տիրապետութիւնից յետոյ պրոլետարիատը իրականացրեց իր առաջ դրուած խնդրի մի մասը,— այն է՝ խոշոր բուրժուազիայի անմիջական տապալումը թէ քաղաքում և թէ գիւղում և նրա առաջ այժմ ամբողջապէս կանգնած է խնդրի երկրորդ մասի լուծումը, այն է՝ սոցիալական շինարարութիւնը, կոմմունիզմին անցնելու խնդիրը։*

*Բայց եթէ քաղաքում պրոլետարիատի և աշխատաւորական խաւերի խոշոր մեծամասնութիւնը գործով, զէնքը ձեռքին պաշտպանում է դիկ-*

8420



տատուրան և մասնակցում սոցիալիստական շինարարութեան, ապա գիւղում մինչև այժմ էլ աշխատաւոր գիւղացութեան բազմամիլիոն խաւերը բռնում են միջին դիրքը։

Ստանալով հողը և ազատուելով գերութեան շղթաներից, տանելով կալուածատէրերին ու հարստահարողին, աշխատաւոր գիւղացին՝ իր տնտեսական դիրքի շնորհիւ՝ աշխատում է կապուել բանւորի հետ և միևնոյն ժամանակ, նոյն տնտեսական դրութեան շնորհիւ, որպէս մանր կալուածատէր, վաճառական և սպեկուլեանտ բանւորին հակառակ դիրք է բռնում։ Ահա այստեղից է ծագում և պրոլետարիատի վերաբերմունքը դէպի աշխատաւոր գիւղացութիւնը՝ գիւղացութեան բաժանումը երկու մասի։

Մի կողմից՝ աշխատաւոր գիւղացութիւնը կամ գիւղացութեան պրոլետարական մասը, միւս կողմից կալուածատէր գիւղացութիւնը և սրա մանր բուրժուական մասը։ Պէտք է բաժանել աշխատաւոր գիւղացին, վա-



ճառականն ու սպեկուլեանտը գիւղացուց։

Պարզ է ուրեմն, որ կապիտալիզմից դէպի սոցիալիզմ անցնելու մոմենտի էութիւնը կայանում է նրանում, թէ որ չափով կաջողւեն պրոլետարիատին բաժանել գիւղացութեան աշխատող խաւերը հարստահարողներից և թէ որչափ կաջողի նրան իր հետ տանել աշխատող խաւերը և ստիպել վերջիններիս անցնել տնտեսութեան կոլեկտիւ ձևերին։

Պրոլետարիատը այնչափ աւելի շուտ կը յաղթի և կը նուաճի ամբողջ աշխարհը, որքան շուտ կը կատարի նա աշխատաւոր գիւղացութեան այս բաժանումը ոչ-աշխատաւոր էլեմենտներից, որքան շուտ կը տիրապետի նա գիւղին։

Այսպիսով մեր կուսակցութեան առաջ դրուած են հետևեալ գործնական խնդիրները․

1) Կազմակերպել գիւղերի պրոլետարական և կիսապրոլետարական խաւերը։

2) Այդ բանին կարելի է հասնել

միայն այն դէպքում, եթէ մեր կուսակցութեան կազմակերպողների գըլխաւոր ուշադրութիւնը գիւղում դարձած լինի սովետական տնտեսութիւնների գիւղատնտեսական բանւորների, պրոլետարական տարրերի, գիւղատնտեսական կոմմունաների և միւս կոմմունիստական կոլլեկտիւների աշխատաւոր գիւղացիների պրոպագանդայի, ագիտացիայի և համախմբման վրայ:

## II. Կազմակերպման գործը գիւղում

Յօդ. 1. Ռ. Կ. Կ. Կենտր. Կոմիտէի մէջ հիմնւում է գիւղում գործելու բաժին, որը գործում է Կենտր. Կոմիտէի անմիջական ղեկավարութեան և կոնտրոլի տակ:

Այդ մասը խմբագրում է գիւղական լրագիր, խմբագրում և հրատարակում է ժողովրդական, գիւղական ագիտացիոն և պրոպագանդային թերթիկներ, թռուցիկներ և տալիս է ղեկավարող յօդւածներ Ռոստային (Ռուսաստանի Հեռագր. Գործակալութեան): Կենտրոնական կոմիտէին կից այդ բաժանմունքը գործում է ամենասերտ աջակցութեամբ Լուսաւորութեան և Երկրագործական կոմիսարիատների և Կոմմունիստական համալսարանի:



Յօդ. 2. Ռ. Կ. Կ. Կենտրոն. Կոմիտէն նշանակում է բաժնի վարիչին:

Յօդ. 3. Սրան յանձնւում է հաւաքել պատասխանատու կազմակերպիչներ, որոնց մէջ բաժանւում է Ռուսաստանի Սոց. Խորհրդային Հանր. ռայոնները: Ամեն մի կազմակերպիչ յանձն է առնում իր ռայոնի գործունէութեան ղեկավարութիւնը, նա պարբերաբար շրջում է իր ռայոնի նահանգները, հրահանգում է տեղական գործիչներին և ստուգում նրանց գործունէութիւնը:

Յօդ. 4. Իւրաքանչիւր նահանգական կուսակցական կոմիտէ ընտրում է նահանգական կազմակերպիչ գիւղական աշխատանքի համար (անպայման նահանգական կոմիտէից չպէտք է լինի):

Յօդ. 5. Կազմակերպչի աշխատանքը գիւղում կատարւում է կուսակցութեան նահանգական կոմիտէի գիւղա-

կան գործունէութեան բաժնի ղեկավարութեան և կոնտրոլի տակ։

Յօդ. 6. Նահանգական կազմակերպիչը ղեկավարում և հսկում է գաւառական կազմակերպիչների գործունէութիւնը.

1) Այցելում է իր նահանգի բոլոր գաւառական կուսակցական կազմակերպութիւնները իւրաքանչիւր ամիս։

2) Այցելում է նաև կուսակցութեան բոլոր շրջանային (ВОЛОСТНЫЕ) բջիջները (ЯЧЕЙКИ) կէս տարին մի անգամ այն նահանգներում, որոնք ունին 10-ը գաւառից աւելի և 4 ամիսը մի անգամ այն նահանգներում, որոնք ունին 10 գաւառից պակաս։

3) Գումարում է յատուկ խորհուրդներ (ժողովներ) գաւառական կազմակերպիչների գործունէութեան վերաբերեալ գիւղերում.

4) Առնուազն ամիսը մի անգամ կանոնաւոր կերպով, պարբերաբար հաշիւ է ներկայացնում գիւղական գործունէութեան մասին թէ նահանգական կոմիտէին և թէ կենտրոնական



կոմիտէի գիւղական գործունէութեան բաժնին.

5) Հրահանգում և հսկում գաւառական կազմակերպիչների աշխատանքը։

Յօդ. 7. Իւրաքանչիւր գաւառական կուսակցական կոմիտէ ընտրում է և նշանակում գաւառական կազմակերպիչ գիւղական աշխատանքի համար (պարտադիր չէ ընտրել գաւառական կուսակցական կոմիտէի անդամներից)։

Յօդ. 8. Գաւառական կազմակերպիչը գործում է գաւառական կուսակցական կոմիտէի և նահանգական գիւղական գործունէութեան կազմակերպչի ղեկավարութեամբ։

Յօդ. 9. Գաւառական կուս. կոմիտէի օգնութեամբ նա կազմում է ռայոնական կազմակերպիչների խումբ։

# ՀՐԱՀԱՆԳ

(Ինստրուկցիա)

## ՌՈՒՍ. ԿՈՄ. ԿՈՒՍ. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ, ԳԱՎԱՌԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՅՈՒՂՈՒՄ

### I. Վոլոստի կազմակերպիչը և նրա պարտականությունները.

*Որպեսզի Ռուս. Կոմ. Կուս. Ութերորդ Համագումարի որոշումները գյուղական գործունեության վերաբերյալ գործադրելու կենտրոնում և որպեսզի կուսակցությունը գրավի իր շարքերը գյուղացիության լայն խավեր, գյուղի թե պրոլետարական և թե կիսապրոլետարական շերտեր, ներկա մոմենտի խնդիրը կայանում է գյուղերում կոմունիստական բջիջների (նաչեյկաների) առանձնապես եռանդուն կազմակերպումը, որի համար իւրաքանչիւր վոլոստում նշանակվում է վոլոստի կազմակերպիչ կամ կուսակցության վոլոստային կոմիտեի, կամ (այնտեղ, ուր դեռևս չկա կուսակցության վոլոստային կոմիտե) կուսակցության գավառական կոմիտեի կողմից: Վոլոստի կազմակերպիչը գերադասելի է ընտրել այդ վոլոստի գյուղացիներից, որ գյուղի կյանքին մոտ ծանոթ է:*



Ծանօթություն.— *Առաջարկվում է բաժանել գավառը ռայոնների՝ համապատասխան գավառի վարչական և տնտեսական պայմանների, և նշանակել ռայոնի կազմակերպող մի քանի վոլոստների համար, որը չի արգելում նշանակել նաև վոլոստի կազմակերպիչ:*

*Վոլոստի կազմակերպչի աշխատանքը կատարվում է Ռուս. Կոմ. Կուս. և գավառական կազմակերպչի ուղղակի ու անմիջական ձեռնեցությամբ և հսկողության տակ, և էս պատճառով նա պարտական է՝*

*1) Վոլոստում իր գործունեության մեջ ղեկավարվել կուսակցության ծրագրով և կանոնադրությամբ (իսկ կազմակերպչական ասպարեզում գյու-*

դում կանոնադրության մանավանդ 8 և 9 բաժանմունքներում)։

2) Ունենալ իր ձեռքում վոլոստի բոլոր բջիջների մասսար ղեկավարությունը և իր աշխատանքը գյուղացիների մեջ վարել սերտ աջակցությամբ և գործակցությամբ Հողային Բաժնի Գավառական Գործադիր Մարմնի, Նահանգական Պարենավորման Բաժնի, Լուսավորության Բաժնի և այլ Սովետական հիմնարկությունների հետ. նա այցելում է վոլոստները և տալիս անմիջապես գյուղացիներին էս կամ էն բացատրությունները և լուսաբանում բնակիչներին հիմնական օրենքները հողի, հանրապետության անտառների մասին և նմանապես Սովետական իշխանության հրատարակած բոլոր շրջաբերականների ու դեկրետների մասին։

3) Հիմնական կազմակերպչական միջոցը պիտի կազմեն գյուղի պրոլետարական մասսաները, գրավելով նաև էն միջին խավերը, որոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը։ Կոմմունայի անդամների և Սովետական



տնտեսությունների բանվորների վրա պետք է դարձնի առանձին ուշադրություն որպես հիմք և կենտրոն պրոլետարական կազմակերպության, և էն տեղերում, ուր նրանք գոյություն ունեն, պետք է ամենից առաջ կազմակերպել կուսակցության և բանվորական կոմմունայի բջիջներ։

4) Ծանոթանալ վոլոստի ամեն մանրամասնությունների հետ, մանել և ծանոթանալ կոմմունայի և Սովետական տնտեսությունների կյանքի բոլոր կողմերի հետ, նմանապես ամենաջերմ մասնակցություն ունենալ՝ Երկրագործության Կոմիսարիատի և պրոֆեսիոնալ միությունների կենտրոնական կոմիտեի գործակցությամբ՝ գյուղատնտեսական բանվորների կազմակերպության մեջ, մասնակից անել պարտադիր կուսակցական աշխատանքին գյուղերի կոմմունիստ-ուսուցիչներին, Կոմմունիստական Երիտասարդության Միության անդամներին և գյուղի բոլոր կոմմունիստ ինտելիգենտ ույժերը։

5) Իւրաքանչիւր վոլոստային բջիջի (ռաչեյկայի) համար կազմակերպել

գրադարան, իսկ գիւղերում, ուսուցիչների օգնութեամբ՝ ընթերցարան — խրճիթներ, և վարել գիւղացիների մէջ ամենալայն ագիտացիա, բացատրել գիւղացիներին Հանրապետութեան սահմանադրութիւնը, Ռուս. Կոմ. Կուս. ծրագիրն ու կանոնադրութիւնը և Սովետական իշխանութեան դեկրետները:

6) Ամենաջերմ մասնակցութիւն ունենալով կուսակցութեան անդամների ընդհանուր ժողովներին և վոլոստային ու գիւղական այլ ժողովներին, կուսակցութեան վոլոստնոյ կոմիտէի առաջարկութեամբ հրահանգել և ղեկավարել աշխատանքները վոլոստի բոլոր Սովետական հիմնարկութիւնների կուսակցական բջիջներում, միշտ բարձր պահելով Կոմունիստական կուսակցութեան դրօշակը, և չխառնելով Վոլոստի Գործադիր Մարմնի (Վոլիսպոլկոմի) տնտեսական-տեխնիքական կարգադրութիւնների մէջ:

7) Վարել Վոլոստի կուլտուրական-կրթական գործը համապատասխան կենտրոնի դեկրետների և տեղական իշխանութեան կարգադրութիւնների



ժողովրդական լուսաւորութեան ասպարէզում, գրաւելով էս աշխատանքների մէջ գիւղացութեան ամենալայն խաւերը:

8) Ամենաջերմ աջակցութիւն ցոյց տալ բնակիչներին աջակցելու կոօպերացիաներին, բացատրելով գիւղացութեանը կոօպերացիայի մեծ նշանակութիւնը և կռուելով կոօպերատիւների մէջ կուլակ տարրերի մտնելու դէմ:

9) Պահանջել սովետական տնտեսութիւններից և կոմմունաներից օգնութիւն, անմիջական գործնական օգնութիւն հասցնել շրջապատի գիւղացիներին:

10) Աշխատել, որ կոմմունիստական բջիջը գրաւի ազգաբնակութեան աչքում պրոլետարիատի ամենաբարձր ու հեղինակաւոր օրգանի տեղը, որպէս պաշտպան պրոլետարիատի և էն բոլոր գիւղացիների, որոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը:

11) Կազմել զեկուցումներ վոլոստի կազմակերպութեան մասին և ներկայացնել կուսակցութեան գաւառական

կազմակերպութեան ու կուսակցութեան գաւառական կոմիտէին:

II. Գաւառական կազմակերպիչը եւ նրա պարտականութիւնները. — Գաւառական կազմակերպիչը ընտրւում է կուսակցութեան Գաւառական Կոմիտէի կողմից և իր գործունէութեան մէջ հաշուելու է Գաւառական կուսակցական կոմիտէին ու Նահանգական կազմակերպչին, այս պատճառով նա ներկայանում է վոլոստների կազմակերպիչների կուսակցական պատասխանատու ղեկավարը տուած գաւառի սահմաններում:

Գաւառական կազմակերպիչն ընտրւում է գիւղը գործնականապէս լաւ ճանաչող ընկեր-կոմմունիստներից և նւիրւում է իր ամբողջ ժամանակը գիւղացիների մէջ աշխատելուն:

Գաւառական կազմակերպիչն իր օգնականներին ընտրում է գիւղը լաւ ճանաչող ընկերներից և բաժանում է նրանց մէջ գաւառի աշխատանքը.

Գաւառական կազմակերպիչը պարտաւոր է՝

1) Ջերմ մասնակցութիւն ունենալ

1006
29566



վոլոստային կազմակերպութիւններ ստեղծելու գործում.

2) Շրջել անձամբ վոլոստային մեծ ու փոքր գիւղական կուսակցական կազմակերպութիւնները, համաձայն 82 յօդ. գիւղի կազմակերպութեան վերաբերեալ կանոնադրութեան:

3) Տեղափոխել կուսակցական վոլոստային գործիչներին մի տեղից միւսը կուսակցութեան գաւառական կոմիտէի համաձայնութեամբ.

4) Օգնութեան հասնել գիւղացիներին (գիւղի տեղեկատու մարդկանց, ընտրեալներին և առանձին գիւղացիներին), երբ նրանք որեւէ դիմում, բողոք կամ յայտարարութիւն են անում Սովետական հիմնարկութիւններին:

5) Այցելել վոլոստների ընդհանուր ժողովներն ու միտինգները և զեկուցումներ կարդալ այնտեղ:

6) Գումարել առնուազն ամիսը մի անգամ բոլոր վոլոստային կազմակերպիչների ժողով՝ ամբողջ գաւառի գործունէութեան մի ընդհանուր գիծ մշակելու համար:

7) Գաւառային Գործադիր Կոմիտէի

յանձնարարութիւնը և կուսակցութեան Գաւառական Կոմիտէի գիտութեամբ բոլոր Սովետական հիմնարկութիւնների և սովետական գործիչների գիւղական ապարատում կատարած աշխատանքները համաձայն կուսակցութեան Կենտ. Կոմիտէի և Խորհրդային բարձրագոյն հիմնարկութիւնների դիրեկտիւների, և զեկուցումներ անել էս մասին համապատասխան Սովետական կուսակցական կազմակերպութիւններին։

8) Ամենաջերմ մասնակցութիւն ունենալ՝ կոմմունաների գաւառական միութիւններ, գիւղատնտեսական բանւորների միութիւններ կազմակերպելու Երկրագործական Կոմիսարիատի հետ սերտ գործակցութեամբ, Հողային Գաւառական բաժնի հետ միասին, օգնութեան գալով գիւղացիներին Սովետական տնտեսութիւնների կողմից, կազմակերպել ինչպէս նրանց՝ նոյնպէս բանւորական և կոմմունիստական բջիջներ։

9) Կազմել հաշիւներ գիւղացիների մէջ աշխատելու մասին և ներկայաց-



նել Նահանգական կազմակերպութեան և կուսակցութեան Նահանգական Կոմիտէին։

## Գ. Նահանգային կազմակերպիչը և նրա պարտականութիւնները

Նահանգային կազմակերպիչը ընտրւում է կուսակցութեան Նահանգական Կոմիտէի կողմից գիւղը գործնականապէս լաւ ճանաչող ընկերներից։ Եւ կուսակցութեան Նահանգական Կոմիտէի յանձնարարութեամբ նա ներկայանում է կուսակցութեան պատասխանատու ղեկավարը գիւղում աշխատանքներ վարելու տուած նահանգի սահմաններում։ Նահանգական կազմակերպիչը նւիրում է իր ամբողջ ժամանակը գիւղացիների մէջ աշխատանք վարելուն և ընտրում է իր համար օգնականներ, որոնց մէջ բաժանում է նահանգի ռայոնները։

Նահանգային կազմակերպիչը պարտաւոր է՝ ղեկավարել գաւառական կազմակերպիչների աշխատանքը Ռուս. Կոմ. Կուս. Կենտ. Կոմիտէի և Նահանգ-

գական Կոմիտէի հրահանգների համաձայն և խստիւ հսկել նրանց գործունէութեան վրայ, համաձայն Ռուս. Կոմ. Կուս. Կենտ. Կոմիտէի Գիւղական Բաժնի ցուցումների:

2) Անձամբ շրջել Նահանգի գաւառները և վոլոստները և տեղում ծանօթանալ գիւղում աշխատելու ասպարէզում կատարուած կուսակցական ու Սովետական գործունէութեան դրութեան հետ:

3) Համակերպել գիւղացիների մէջ կատարուելիք աշխատանքները, Նահանգական և Գաւառական հողային բաժանմունքների Ժողովրդական Լուսաւորութեան մասնաճիւղ և Նահանգական ու գաւառական պարենաւորման բաժինների հետ:

Ծանօթութիւն. Նահանգական և գաւառական կազմակերպիչները Ժողովրդական Լուսաւորութեան մասնաճիւղի ու կուսակցական կոմիտէի աջակցութեամբ ու թոյլտուութեամբ կազմակերպում են գիւղական կուսակցական դպրոցներ, գիւղի գործիչներ պատրաստելու: Էդ դպրոցների ունկնդիրներին ընտրւում են գլխաւորապէս գիւղացիներից:



4) Առանձին ուշադրութիւն դարձնել Սովետական տնտեսութիւնների կոմմունաների վրայ, յարմարեցնելով նրանց աշխատանքն էնպէս, որ գիւղացիները տեսնեն նրանց մէջ կոմմունիստական կուլտուրայի իսկական տարածողներին, քանի որ Սովետական տնտեսութիւնները և կոմմունաները պիտի լինեն Սովետական շինարարութեան կենդանի օրինակները:

5) Ձգտել, որ Սովետական տնտեսութիւնները ցոյց տան գիւղացիներին հողի կոմմունիստական մշակման լաւագոյն կողմերը և առաւելութիւնը անհատական տնտեսութիւնների հետ համեմատած:

Պարտաւորել Սովետական տնտեսութիւններին Նահանգական և Գաւառական Հողային բաժինների միջոցով խստիւ հաշւի առնել գիւղատնտեսական ոյժերը, ստիպելով նրանց գործնականապէս օգնել գիւղացիներին խորհուրդներով, փորձերով և այլն:

6) Պարտաւորել Սովետական տնտեսութիւններին և կոմմունաներին ի-

րական օգնութիւն ցոյց տալու Կարմիր Բանակի զինուորների ընտանիքներին նրանց հողերի մշակման մէջ, օգնել սերմացուով, անասուններով ու գործիքով, բանւորական ոյժով, կըրթա-կուլտուրական գործով և այլն։

7) Պարտաւորեցնել սովետական տնտեսութիւններին ու կոմմունաներին՝ գիւղացիներին օգնութեան հասնել գործիքների վերանորոգման մէջ, յանձն առնելով նորոգել գիւղացիների գիւղատնտեսական գործիքները և այլ գիւղական ինվենտարը։

8) Աջակցել կազմակերպելու սովետական տնտեսութիւնների և կոմմունաների պրոլետարական տարրերին բանւորական ու կոմմունայական կուսակցական բջիջներ։

9) Երկրագործական կոմիսարիատի մարմինների հետ միասին կազմակերպել կոմմունաների և սովետական տնտեսութիւնների ընդհանուր նահանգական միութիւններ։

10) Պրոֆեսիոնալ Միութիւնների Կենտրոնակ. Կոմիտէին կից երկրագործական Կոմիսարիատի օրգանների հետ



միասին կազմակերպել գիւղատնտեսական բանուորների միութիւն։

11) Գրաւել գիւղական ուսուցիչներին, կոմմունիստական երիտասարդութեան տարրերը, գիւղի կանանց և ընդհանրապէս գիւղի կոմմունիստական տարրերը կուսակցական աշխատանք վարելու համար գիւղում։

12) Այցելել բոլոր Գաւառական և Վոլոստային Սովետների ժողովները և զեկուցումներ անել էնտեղ գիւղում աշխատելու հարցերի մասին։

13) Գումարել առնուազն ամիսը մի անգամ գաւառական կազմակերպիչների ժողով գիւղում ընդհանուր աշխատանքի ծրագիր մշակելու համար։

14) Աջակցել գիւղացիներին (պատգամաւորներին և առանձին գիւղացիներին), երբ սրանք դիմում են սովետական հիմնարկութիւններին զանազան տեսակ խնդիրներով, գանգատներով կամ յայտարարութիւններով։

15) Զեկուցումներ ներկայացնել կուսակցութեան Նահանգական Կոմիտէին և Ռուսաստանի Կենտր. Կոմիտէին գիւղում կատարուած աշխատանքի մասին։

## Դ) Շրջանային կազմակերպիչը Եւ նրա պարտականությունները

Ներկայ հրահանգը կյանքում գործադրելու համար և Հանրապետության մեջ գյուղական աշխատանքը իսկապես ղեկավարելու համար Կենտր. Կոմիտեն նշանակում է Հանրապետության պատասխանատու շրջանային գործիչներ։

Սրանց աշխատանքի շրջանները որոշվում են Ռուս. Կոմ. Կուս. Կենտր. Կոմիտեի Գյուղական աշխատանքի Բաժնի միջոցով։

Շրջանային կազմակերպիչը պարտավոր է՝

1) Շրջել նահանգն ու տեղերը և հրահանգել նահանգական, գավառական և վոլոստային կոմիտեները գյուղական աշխատանքի վերաբերյալ։

2) Ռուս. Կոմուն. Կուս. Կենտր. Կոմիտեի Գյուղական Բաժնի համաձայնությամբ ժողովում է նահանգական կազմակերպիչների ռայոնային խորհրդակցություն։

3) Կոնտրոլի ենթարկել նահանգի, գավառի և վոլոստի գործիչների աշխատանքը։



4) Մասնակցել նահանգական համագումարներին, գավառական կոնֆերենցիաներին և զեկուցումներ անել Կենտեկ։

5) Տալ ցուցումներ և բացատրություններ գյուղում կատարված աշխատանքների վերաբերյալ։

6) Երկրագործական Կոմիսարիատի և Պրոֆ. Միությունների Կենտ. Կոմիտեի հետ միասին աջակցել կազմակերպել գյուղատնտեսական բանվորներին։

7) Սովետական տնտեսությունների և կոմմունաների մեջ կազմակերպել բանվորական և կոմմունայական կուսակցական բջիջներ։

8) Կազմակերպել օգնություն գյուղացիներին սովետական տնտեսությունների և կոմմունաների կողմից, ուշադրություն դարձնելով միայնակ պրոլետարների և կարմիր-բանակաւորների ընտանիքներին օգնության վրայ։

9) Գրավել գյուղում աշխատանքներ վարելու անհրաժեշտ բոլոր կուսակցա-

կան գործիչներին, նոյնիսկ պատասխանատու անձերին։

10) Կենտ. Կոմիտէի թոյլտւութեամբ և կուսակցութեան Նահանգ. Կոմիտէի համաձայնութեամբ նշանակել և տեղափոխել նահանգական գաւառական և վոլոստային կազմակերպիչներին։

11) Հաշիւ տալ իր ռայոնի գիւղում կատարուած աշխատանքի վերաբերեալ։

## ԲԱՆԱՁԵՒ

(Կոմմունիստական տեղական բաժանմունքների և գիւղում կատարելիք կուսակցական աշխատանքների միջև լինելիք կապի մասին)

Ի նկատի ունենալով էն հանգամանքը, որ գիւղի կուսակցական աշխատանքները սերտ կապ ունեն Խորհուրդների (պետական) աշխատանքների հետ՝ այսինքն բնակիչներին աշխատաւորների պետութեան—այն է Խորհրդային Իշխանութեան էութիւնը, նրա թէ տեղական և թէ կենտրոնական մարմինների արձակած հիմնական հրամանների ու հրահանգների բացատրելու հետ.



Որ էդ դեկրետները կեանքում իրականացնելու ու գիւղի լայն մասսաներին պետական աշխատանքներին լծելը հնարաւոր միմիայն, թէ քաղաքի պրոլետարիատի և թէ գիւղական չքաւորութեան շարքերից դուրս եկած կուսակցական աշխատողների ակտիւ գործակցութեան միջոցով.

Գիւղում աշխատողների համառուսական Խորհրդակցութիւնը որոշեց։

1. Գիւղում աշխատել ցանկացող Կոմկուսի իւրաքանչիւր անդամ պարտաւոր է մանրամասնօրէն ծանօթանալ գիւղի վերաբերեալ Խորհրդային Իշխանութեան արձակած բոլոր դեկրետներին և հրահանգներին։ Սրա հետ միասին նա նոյնպէս պէտք է տեղեակ լինի էն նահանգի տեղական իշխանութեան օրգանների (Խորհուրդների և գործադիր կոմիտէների) հրահանգներին, որտեղ ինքը գիւղական աշխատանքներ է վարելու։

2) Գիւղում աշխատող կուսակցական խմբաքանչիւր անդամ պարտաւոր է Խորհրդային Իշխանութեան որոշումներն իրականացնելիս, աշխատաւորներին օգնութեան գալ: Դրա համար նա պէտք է էդ որոշումները բնակիչներին բացատրի և պէտք է անմիջապէս մասնակցի Խորհրդային էն բոլոր աշխատանքներին, որոնք պահանջում են գիւղի բնակչութեան կազմակերպած ու մասսայական համակրանքը:

3) Գիւղում աշխատող կուսակցական խմբաքանչիւր ընկեր պէտք է աջակցի գիւղի վարչական օրգաններ կազմակերպելու գործին: Նա պէտք է ջանայ, որ էդ օրգանների աշխատանքները կանոնաւոր ընթանան, որ աշխատաւորների կարիքները, առանց թափառումների, շուտով բաւարարուեն: Ուստի իր ոյժերի ու գիտութեան չափ պէտք է օժանդակի գիւղական վարչական օրգաններին իրենց ընթացիկ խնդիրներն ի կատար ածելու համար: Պէտք է գիւղական կեանքից բղխող իւրաքանչիւր հարցի լուծման



ժամանակ փորձնական՝ պրակտիկ ցուցմունքներ անի, իր անձնական մասնակցութեամբ օգնի գաւառակային (ВОЛОСТЬ) գործադիր կոմիտէների որոշումներն իրագործելու, զանազան տեսակ հրահանգներ մշակելու, գործերը վարելու և այլ սրանց նման խնդիրներ լուծելու համար. հարցեր որոնք ըստ երևոյթին շատ հասարակ են թւում, բայց գիւղի յետամնաց աշխատաւորութեան համար մեծ նշանակութիւն ունեն:

4) Բոլոր յիշուած խնդիրները լիովին ի կատար ածելու նպատակով, կուսակցական աշխատակիցները պարտաւոր են, տեղական աշխատանքները վարելիս, մշտական սերտ կապ հաստատել Խորհրդային օրգանների հետ: Նրանք չպիտի թոյլ տան. որ գիւղական կուսակցական բջիջները վարչական մարմինների վերածուեն. այլ վերջինների միջոցով պէտք է կեանքի մէջ իրագործեն իրենց որոշումները: Միմիայն գիւղի աշխատաւոր բնակչութեան առօրեայ կարիքներին իրական օգնութիւն ցոյց տալով, և իբրև

պետական կուսակցութեան անդամ իր դերքն օգտագործելու համար թիւրիմացութեամբ մեր մէջ սպրթնած անհատների դէմ կռուելով է, որ գիւղում աշխատող կուսակցական ընկերները կը կարողանան միլիոնաւոր աշխատաւորների ղեկավարութեան գործը իրենց վրայ վերցնել։

Ընդունելով, որ մեր հիմնական խնդիրներից մէկն էլ աշխատաւոր լայն մասսաներին դէպի Խորհրդային Իշխանութեան կառուցումն ու դէպի մեր կուսակցութեան շարքերը գրաւելն է. Որ անկուսակցականների համագումարներն, իբրև մասսաների քաղաքական դաստիարակութեան նախապատրաստական քայլ, մեր կուսակցական և Խորհրդային կազմակերպութիւնների կողմից բաւականին օգտագործուել և արդէն տուել են իրենց դրական հետևանքները.

Առաջին համառուսական Խորհրդակցութիւնը առաջարկում է գիւղում աշխատանքներ կազմակերպող բաժիններին նախ վերոյիշեալ նման համագումարներ հրաւիրելու համար համապա-



տասխան հրահանգներ մշակել և ապա կուսակցական համառուսական համագումարին առաջարկել էս ամենակարևոր խնդիրը մտցնել օրակարգի մէջ ի քննութիւն։

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0191193